Համանման դրութուն է նաեւ Գերմանիայում: Այնտեղ 2 մլն. թուրքերն արդեն առաջադրել են կրոնամշակութային ինքնավարության հարցը... Եւ իսլամի, որպէս Գերմանիայի երկրորդ կրոնի, պետության կողմից ֆինանսավորման խնդիրը:

Նմանատիպ հարցի՝ դժվարութանը ձեռք բերած միատարր ազգային պետության փլուզման եզրին է կանգնած Բուլղարիան: Մինչ 1988 թվականը Բուլղարիայի վատում էին օտարներին: Եթե առաջ ինքնապաշտպանական բնագոյը բուլղարներին հուշում էր, որ միակ ուղին խորք մշակութային, կրոնից, լեզվից եւ այլ ծագում ունեցող տարրից ազատվելն է, ապա այսօր իրարարութունը 180 աստիճանով շրջվել է: Բուլղարներն իրենք սկսեցին թուրքերին ետ կանչել, քանզի Եւրոպան նրանց հետ համագործակցելու պայմանը կապում էր թուրքերի վերադարձի եւ նրանց որպէս առանձին էթնոսի պահպանման հարցին՝ բուլղարական պետության եւ Եւրոպայի հարավ-

ասեւելով, որ քրիստոնյա բնակչության շրջանում խիստ նվազել է ծննդաբերութունը, երկրորդ էթնոսի մուտքը Բուլղարիայի համար աղետ է նշանակում:


Հարավսլավիայի, որպէս միասնական պետության փլուզվելու հեռանկարի հիմնական պատճառներից մեկն այն է, որ պետությունը չկարողացավ լուծել իսլամի հաղթարշավը դիմագրավելու խնդիրը: Ըստ էության, հետզհետե ճնշելով Սերբիային, նրան կտրում են ծովից, իսկ նրա ներսում ստեղծում հեռակողգայկներ՝ մուսուլմանների նոր ալիքներ ընդունելու համար:

Ավելի փոքր մասշտաբներով, սակայն նույն գործընթացն է սկսվել նաեւ կաթոլիկ եկեղեցու միջնաբերդում Իտալիայում: Այստեղ նույնպէս հայտնվել են առաջին մուսուլմանները:

Որպէսզի լեռը լավ երեւա, պետք է հեռվից նայել: Այսօրվա դիտակետից ավելի պարզ ենք սկսում հասկանալ Իրանի եւ Իրաքի միջեւ պատերազմի զարթոյնի խթանները:


Այդ պատերազմի թիկունքում էին կանգնած Ալիւնի, Ռաշիդիլի, Կուրանի սովորները եւ թուրք սոցիալիստական կուսակցության նպատակները, որոնց նրանք ծառայում էին իրենց կողմից կաշառված եւ վերահսկող մուսուլման ապարատի միջոցով: Այսօր այդ ապարատն ու իր գործակալներն են ծրագրում Սոււզայիթի, Բաքվի, Արարադի ու Գրեբգոյությունները:

Իրան-իրաքյան պատերազմը քազմապայան գործողութուն էր: Այս անգամ էլ, ինչպէս Հունաստանի շախախման եւ Կիպրոսի մի մասի գրավման դեպքում, թուրքերը գործեցին Ռուսաստանի եւ Ամերիկայի գաղտնի եւ միաժամանակյա համաձայնութեամբ: Նկատի առնելով մեր գաղափարաւորութունն ու քաղաքական երեւոյթների կենցաղային ընթացումը, մեզ դեռ շատ ջանք է պետք թափել, հասկանալու համար, թե ո՞վ է վերջիվերջ կանգնած իրադարձութունների բուրգի զագաթում: Ո՞վ է այն անտեսանելի համակարգողը, որի խաղն էին խաղում Ռուսաստանն եւ Ամերիկան: Մինչ իսլամական ֆունդամենտալիստների հաղթանակը, Իրանը արագորեն ընթանում էր դեպի իր աշխարհիկ ապար-



արտահայտությունը մեջբերում ենք որպէս պարթուրից գաղափարախոսներից մեկի՝ դոկտոր Նազիմի խոսք, ասված առաջին համաշխարհային պատերազմից առաջ հայերի եւ հայկական պետության գոյության հնարավորութեան առթիվ:

Սակայն վերադառնալով Եւրոպա: Նորից հարց է ծագում, սովորաբար, պատմական անարդարության ազդեցությունն ավելի շատ կրում է թույլ ազգը: Սակայն սա ի՞նչ պատմական տեղեկված է, եւ ի՞նչ վերակառուցման իրականացում, երբ թույլ եւ համամատարար փոքրաթիվ ժողովուրդ փաստորեն տեղահանում է բազմաքանակ եւ ավելի ուժեղ մի ժողովուրդի, իր իսկ երկրում, իր իսկ հզոր բանակի աւ անլըտանգութեամբ ծառայութունների աչքի առջեւ: Տեղահանում են ռուսներին: Գործողութեան վայրը ոչ թե Բաքուն է (ավելի ճիշտ, ոչ միայն Բաքուն), այլ ստրատեգիական Դրիմը, որը հսկում է Ռուսաստանի դարպասները հարավում: Ըստ քրիստոնյա



րին, եւ ինչպէս է ստացվում օտար էթնոսի այդ հանդարտ, «թաղչա» ներխուժումը, երկու կողմերի բարեհաճութեամբ: Հյուսիսային Կովկասում էլ, ինչպէս Դաղստանում, «թուրքերը մի օր կանեն, որ իրենք են այդ հողի ամենահին բնակիչները» տրվալ պարագայում մղուկեցների, իսկարներին եւ այլոց հետնորդները:

Ասվածի առնչութեամբ հակված ենք ենթադրելու, որ

ա) Եւրոպայում սկսված ազգային-միավորիչ եւ ընդհանուր-ինտեգրացիոն գործընթացները ընթացան ոչ թե հարեւան, ազգակից տարրերից միակուտ պետական կազմավորման ուղիով, այլ ի սկզբանե առաջինի նկատմամբ անտագոնիստական քաղաքացիական:

բ) Իսլամի, եւ մասնավորապէս թուրք-իսլամի, ներխուժման գործընթացը ոչ թե տարերային, այլ աշխարհաքաղաքական հեռանկարի իմաստով ծրագրավորված երեւոյթ է: Նպատակը՝ Եւրոպական ընկերակցութեանում երկու, սոցիալական եւ ուրիշ շահերով բաժանված ուժերի գոյացումն է, մայրցամաքի վրա վերահսկումը դադարեցնելու խնդրով:

գ) Այդ գործընթացն առկա է նաեւ ԽՍՀՄ-ում, խորհրդային ղեկավարների նոր սերնդի հովանու ներքո: Այն ունի պատմական ավելի հին հիմքեր եւ նպատակ է հետապնդում արդեն ոչ հեռու ապագայում, թուրքական (թուրքերի)՝ մինչպետական, ազգային միավորում ստեղծելը, որից մինչեւ հզոր, միացյալ թուրքական պետությունը՝ մեկ քայլ է:

Ռ. ՔԱՐԵՆՆ

1979 թ. հնդկափոխությունից հետո Իրանը փաստորեն մեկուսացավ արտաքին աշխարհից: Երկարատեւ քաղաքական եւ տրնտեսական կղզիացումը, ինչպէս նաեւ ետ-հնդկափոխական շրջանի խնդրումներն ու Իրաքի հետ 8-ամյա զինական բախումը, ու վերջապէս անցյալ տարվա աղետաբեր երկրաշարժն ու իրաքի փախստականների հոսքը, ծանր կացության մեջ դրեցին երկրի ղեկավարներին:

Իրանի համար հիմնական եկամուտի աղբյուրը հանդիսացող նավթը, պատերազմի ավերածութունների հետեւանցով ներկայումս արտահանվում է անմշակ վիճակով, իսկ երկրի կարիքների համար՝ ներմուծվում մշակված նավթ:

1990-ին Իրանը նավթից ստացավ ընդամենը 15 միլիարդ դոլլարի եկամուտ: Նույն չափանիշը նախատեսվում է նաեւ 1991-ի համար: Նշենք, որ մինչպատերազմական շրջանում Իրանը նավթից ստանում էր շուրջ 25 միլիարդ դոլլարի եկամուտ: Այն դիպքում, երբ 20 տարվա ընթացքում (1970-1990) երկրի բնակչությունը կրկնապատկվել է՝ անցնելով 50 միլիոնի ասանդանալի: Իրանի վիճակագրության կենտրոնի հաշիվարկներով, 3,2 տոկոս աճի դեպքում, որն ի դեպ համապատասխանում է 1990 թվականի աճին, 2000 թ. Իրանի ազգաբնակչության թիվը կհասնի 80 միլիոնի:

Իրանի տնտեսության եւ ֆինանսների

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԸ ՄՈՒՏՔ Է ԳՈՐԾՈՒՄ ԻՐԱՆ

նախարար Նուր Բախշի գնահատմամբ, ուրբանյա պատերազմի տարիներին երկիրը 300 միլիարդ դոլլարի վնաս է կրել:

Երկիրը վերակառուցելու նպատակով հաջորդ տարվա համար նախատեսվել է 100 միլիարդ դոլլարի կապիտալ ներդրում, որից 17 միլիարդը՝ արտասահմանյան վարկերի հաշիվին: Իրանի տնտեսական վիճակը ուսումնասիրելու եւ անփոփոխ պատրաստելու նպատակով, վերջերս Թեհրան է ժամանել, եւ այժմ այնտեղ աշխատանք է տանում, միջազգային դրամատան կողմից գործուղված մի հանձնախումբ: Ենթադրվում է, որ մի քանի նախագծերի ֆինանսավորումը կատարվելու է միջազգային դրամատան կողմից:

Նախարար Նուր Բախշի կարծիքով, Իրանն իր 50 միլիոնանոց բնակչությանը եւ աշխարհագրական քաջադիպ դիրքով, կապիտալ ներդրումների համար նպաստավոր եւ շահութաբեր օբյեկտ է:

«Քրիստոն Սայնզ մոնիթորը» նշում է, թե Իրանը ներկայումս իրախուսում է արտասահմանի հետ համատեղ՝ կապիտալ ներդրումներ, եւ հնարավոր է, որ շուտով օտարերկրացիներին իրանական համատեղ

ծնունդություններում մինչեւ 50 տոկոսանոց մասնակցության հնարավորություն կընձեռնի:

Կենսա Մոնամադ Ռզա շահի կառավարության օրոք Իրանը Ֆրանսիային վարկ էր տրամադրել, որի մարումը, երկու երկրների հարաբերությունների մթազման պատճառով, ցայսօր ձգձգվում է: Վերջերս Իրան ժամանած Ֆրանսիայի արտգործնախարար Դյուման երկրի ղեկավարներին հավաստիացրեց, որ շուտով 11 տարվա վաղեմություն ունեցող ֆինանսական կնճիթը կլուծվի:

Իրանի իսլամական իշխանությունները ձգտում են երկիր վերադարձնել նաեւ ամերիկյան քանկերում պանվող այն խոշոր գումարը, որը շահի վտարման ժամանակ դուրս էր բերվել Իրանից: Սակայն, ԱՄՆ-ի պետքարտուղարության պատասխանատուները նշված գումարը (ավելի քան 10 միլիարդ դոլլար) վերադարձնելու համար, ի թիվս այլ պահանջների, Իրանի իշխանություններին հորդորում են ակտիվ մասնակցություն ցուցաբերել Լիբանանում գերկարված պատանդների ազատագրման գործում:

Իրանի տնտեսության եւ ֆինանսների նախարար Նուր Բախշը, անդրադառնալով երկրի ներքին հնարավորություններին, մասնավորապէս նշում է, թե Իրանն իր բնական ռեսուրսների, բարձր որակավորում ունեցող ազգային կադրերի եւ ֆունդամենտալ արդյունաբերության շնորհիվ կարող է դուրս գալ տնտեսական ճգնաժամից: Նա նշեց նաեւ արտասահմանյան երկրների, այդ թվում Ավստրալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի եւ Ժապոնիայի հետ Իրանի տնտեսական համագործակցության կարեւոր դերի մասին, ավելացնելով, որ նշված երկրները ներկայումս Իրանի արդյունաբերության զարգացման գործում մեծ ներդրում ունեն: Նախարար Նուր Բախշը լավատես է նաեւ այն առումով, որ Իրանը արտասահմանյան որեւէ երկրի պարտք չունի:

«Քրիստոն Սայնզ մոնիթորը», վկայակոչելով Կոլումբիայի համալսարանի «Իրանիկա» հանրագիտաբանի տնօրեն Անմադ Աշրաֆի խոսքերը, նշում է, թե Իրանին տնտեսական անկախություն խուսափող կենտրոնացված, մեծաշնորհային կլունմիկան, սոցերկրներում մերժվելուց հետո ամբողջովին վարկաբեկվել է: Աշրաֆը նշում է, թե Մոցի պատերազմն ասպացուցեց, որ հանրակրթության հնարավոր չէ առճակատման գնալ ինչպիսիքիսի մի դեմ: Նրա կարծիքով, պատերազմը նաեւ հրատարակարծրեց Իրանի արդիականացման խնդիրը:

ԳՐԻԳՈՐ ՍՈՍՈՒԵՆՍԸ

ԵՐՈՒՍԱԳԵՄ. - Իրենա Միրոյեզյանի (ըստ երեւույթի՝ պետք է լինի Միրզոյան.) քնակեցրած լծանագին հյուրանոցի այս համարի զարդերն են կազմում փայտյա խաչյալ մի Քրիստոս եւ արծաթյա մի փոքրիկ Շարաթ աշտանակ: Դրանք նրա հավատոս հանգանակի սիմվոլներն են:

Իրենան, 43 տարեկան, հրեանի է: Նա իր որդու՝ 17 տարեկան Արծրունի հետ Իսրայել է գաղթել Խ. Հայաստանից, չորս ամիս առաջ: Նրա ամուսինը՝ Արմենը, այժմ մնում է Խ. Միությունում:

Ամուսինները ցանկանում էին Իսրայել գաղթել խույս տալու համար Խ. Միությունում տիրող տնտեսական ճգնաժամից եւ հայկական հանրապետությունում առկա

գիտաշխատող է եւ աշխատում է երկրի պաշտպանության համակարգում:

Շրջանցելու համար այդ արգելքը, Միրզոյանները մի պլան պատրաստեցին. Իրենան եւ Արմենը կամուսնալուծվեն, Իրենան տղայի հետ կզնա Իսրայել, եւ մի քանի ամիս հետո Արմենը դուրս կգա Խ. Միությունից տուրիստական վիզայով: Այնուհետեւ նրանք կվերամիանան եւ կրկին կըպսակվեն Իսրայելում:

Մակայն այդ պլանը սկսեց մթազնել անմիջապես երբ Իրենան ու Արծրունը ժամանեցին Քեն Գուրիոն օդանավակայան: Հրեական օրենքով, հրեա մորից ծնվածը ինքնաբերաբար նկատվում է հրեա: Մակայն, Արծրունը, որ կնքված էր հայ կե-

ղաֆիզիկայի ինստիտուտում, իսկ այստեղ ստիպված է փողոց մաքրել: Իսկ երբ Իրենան իր տղային տարավ հայկական դըպրոց՝ իսրայելյան դպրոցի փոխարեն, կառավարական պաշտոնյաներն սպառնացին նրան զրկել նոր ներգաղթողի առավելություններից: Հարցը տակավին չի լուծվել:

«Հայաստանում, ասում է Իրենան, ես ինձ միշտ հրեա եմ զգացել: Դա ոչնչանալու զգացողություն էր: Մակայն այստեղ այդ զգացողությունը չի մնացել այլևս: Կրոնն այստեղ պարտադրվում է ժողովրդին»:

Նոր եկողներին ներծծելու հարցը դժվարություն է ստեղծում ոչ միայն Միրզոյանների, այլևս Իսրայելում ապրող հայկա-

շուրջ 2500 մարդ, որոնք իրենք իրենք քաժանում են երկու խմբի՝ «հին» ընտանիքներ, որոնց արմատները երկարում են մինչև Խաչակիրների շրջանը, եւ «նոր» ընտանիքներ, որոնք 1915-ին բուրբերի ցեղասպանությունից են փրկվել:

Համայնքը Խ. Միությունից եկողներին իր կարելիության սահմաններում օգնելու մտադրանքով, չի բաշխելու նորերին գալու Իսրայել:

«Սկզբունքով մենք կողմնակից չենք, որ հայերը լքեն Հայաստանը», բացատրում է երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը: «Երբ հրեաներն են թողնում Խ. Միությունը, նրանք իրենց հայրենիքն են վերադառնում, սակայն հայերն արդեն ապրում են իրենց պատմական հայրենիքում: Մենք համոզված ենք, որ քաղաքական, սոցիալական եւ մշակութային պատճառներով անհրաժեշտ է հայկական քաղաքակրթությունը պահպանել Հայաստանում»:

Խ. Միությունից Իսրայել գաղթած հայերը ընդհանրապես այստեղ են գտնվում օրինավորապես, հրեական պետության մեջ ազգային պատկանելությամբ կամ ամուսնությամբ, վայելելով քաղաքացիական իրավունք: Ուրիշները, սակայն, կասկածելի կարգավիճակ ունեն: Անդրհասարակական է. թե ինչը գիտի բազմաթիվ պարագաներ, երբ հայ տղամարդիկ վճարելով՝ կնքած ամուսնություններ են կնքել հրեա կանանց հետ, պարզապես Խ. Միությունից խույս տալու համար:

Մի ուրիշ դեպքում, երբ մի հայ ընտանիքի չորս անդամներ դիմում են տվել Մոսկվայում իսրայելյան ներկայացուցչությունից վիզա ստանալու առանց հրեա հայտարարելու իրենց, այն անբացատրելիորեն շնորհվել է նրանց: Եւ երբ նրանք խոսել են Իսրայել, ներգաղթի պաշտոնյաներն նրանց տեղեկացրել են, որ չեն կարող ապրել այստեղ:

«Կրոնն այստեղ ամեն ինչ է», ասում է Իրենա Միրզոյանը, որ այժմ զգոյս է Հայաստանից հեռանալու համար:

«Կարծում էի, որ Իսրայելը խոստացված այն երկիրն էր, մեղքի ու կաթի կրկիրը: Մակայն այն երբեք այն չէ, ինչ մենք ակնկալում էինք»:

ԹՄՍ ՂՄԼԼԸ

«Չիկագո Քրիթիկ», 19 մայիս 1991

Chicago Tribune

ԽՈՐՀՐԴԱՅԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՈՎ ԽՍՐԱՅԵԼԸ ԱՆՅԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է ՈՉ-ՅՐԵԱՆԵՐԻ ՅԱՄԱՐ

ազգամիջյան կռիվներից:

Այն քիչը, որը իմացել էին նրանք Իսրայելի մասին, բխում էր լավագույն լուծումը նրանց համար: Ի վերջո, հայերն ու հրեաները 4-րդ դարից սկսած երուսաղեմի պատերի ներսում իրար հետ ապրել են խաղաղությամբ, այժմ էլ Իսրայելի իր քույրերն էր բացում տասնյակ հազարավոր խորհրդային հրեաներին ընդառաջ:

Մակայն Միրզոյաններին եւ նրանց մեծ տասնյակ ուրիշ խորհրդահայերին, որոնց մեծ մասը խառնամուսնություններ, իրականությունը բոլորովին այլ պատկերով ներկայացավ: Նրանք հայտնաբերեցին, որ Իսրայելը՝ հրեա ժողովրդի հնօրյա հայրենիքն ու ապաստարանը, եթե ոչ բջճամակամ՝ գեթ անտարբեր էր ոչ-հրեա գաղթականների նկատմամբ: Եւ տեղում գտնվող հայկական փոքրիկ գաղութը չուներ միջոցներ, ոչ էլ հանձնառություն նորեկներին ներծծելու:

Իսրայելյան օրենքն այնպիսին է, որ ներգաղթի վիզա կարելի է շնորհել Միրզոյանների ամբողջ ընտանիքին, քանի որ Իրենան հրեա է: Խորհրդային իշխանությունները, սակայն, մերժել էին ելքի վիզա տալ Արմենին, առարկելով թե նա ավագ

դեցում եւ ամուր կապված իր հոր կրոնին, մեծեց այդքան հեշտ հրաժարվել իր հայկական արմատներից:

Ընտանիքն իմացավ նաեւ, որ հրեական օրենքով Արմենն ու Իրենան չեն կարող Իսրայելում ամուսնանալ՝ մինչեւ որ Արմենը չընդունի հուդայական կրոնը: Իսկ եթե նրանց արտոնվի վերապսակվել հայկական եկեղեցում, ապա Իրենան կկորցնի իր իրավունքները որպես իսրայելյան քաղաքացի:

Հարցի էությունն այն է, որ Իսրայելը «հրեա» հասկացությունը նկատում է նաև կրոն, եւ՝ ազգություն: Տվյալ անձը հրեա պիտի լինի՝ վայելելու համար իսրայելյան քաղաքացիության իրավունքներն ու առավելությունները:

«Քանի որ իմ ամուսինը հրեա չէ, նա ոչ ոք է այս երկրում», ասաց Իրենան, որ վստահ է, թե իր ամուսինը մեծ դժվարություններ պիտի դիմագրավի Խ. Միությունից եկած մյուս լավ ամուսնագետների հետ երկրում ազատ մնալուց քիչ աշխատանքների համար պայքարելիս:

«Խ. Միության մեջ, ասում է Իրենան, որպես մասնագետ նա աշխատում է աստ-

կան փոքրիկ գաղութի համար, որ քրիստոնեության վաղ օրերից ի վեր ապրում է Երուսաղեմի պարիսպների ներսում:

Ամեն շաբաթ Խ. Միությունից ժամանած երկու կամ երեք ընտանիքներ են ներկայանում երուսաղեմի Հայոց վանք: «Մենք ղեկն են ուզում, աշխատանք են ուզում, քրեակարան են ուզում, ուզում են որ իրենց ներխուժեն մեր դպրոցներն ընդունենք, սակայն մենք շատ քիչ նմարավորություններ ունենք», ասում է համայնքի ղեկավարներից Հակոբ Անդրեասյանը, որի կարծիքով վերջին մակ տարվա ընթացքում ավելի քան 100 ընտանիքներ են ժամանել Իսրայել:

Մուրք Հակոբ քերականան հայոց վանքի պարիսպներից ներս, որ կազմում է հայկական ներքակված ավանը, հայերն իրենց լավագույն ժիզերն են գործադրում շրջանի հատուկ քաղաքական վեճերից իրենց հետո պահելու համար: Բնակավայրն ունի իր անփական դպրոցները, իր լեզուն եւ ինքնությունը, որ շատ տարբեր է հրեական պետությունից:

Տեղական քնիկ համայնքը հաշվում է

ՄԱՐՁԱԿԱՆ

ՄԱՎԿՈՅ



Միջուցահայ մարզիկներ

ԵՐԿ ԿՍԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1966 թ. սեպտեմբերի 24-ին Սեմա-Մորիս քաղաքում:

Հասակն է 175 սմ, քաշը՝ 70 կգ:

Խաղում է Ֆրանսիայի կրկնակի չեմպիոն եւ հնգակի գավաթակիր «Լիլ» քիժում, որպես հարձակվող:

«Լիլ»ը Ֆրանսիայի 1945-55 թթ. ամենատեղծ քիժն էր, բայց հետո մինչեւ 1969 թ. շրջապատյա էր կատարում առաջին եւ երկրորդ դիվիզիոններում: 1978-ից նորից ուժեղագույնների խմբում է, բայց ոչնչով աչքի չի ընկնում: Անցյալ տարի «Լիլ»ը 20 քիժերի մրցաշարում գրավեց ընդամենը 17-րդ տեղը եւ հազիվ մնաց առաջին դիվիզիոնում:

Հիմա «Լիլ»ը հզոր հովանավոր ունի եւ մտադիր է գալիք տարվանից մտնել եւրոպայի ուժեղագույն քիժերի շարքը: Ֆրանսիայի ընթացիկ առաջնությունում «Լիլ»ը գրադեցնում է աղյուսակի վերին հորիզոնականները: Ուրախ է, որ այս անվանի քիժի լավագույն խաղացողներից մեկը մեր հայրենակից Էրիկ Ասատրյանն է, որի հետ «Լիլ»ի տնօրենները մեծ հույսեր են կապում:

«ԿՈՏԱՅԸ»-ԻՆ ՕԳՆՈՒՅՈՒՆ Է ՊԵՏ

Ֆուտբոլի ՆՍՅՄ առաջին խմբի առաջնության գրեթե մեկ քառորդն արդեն ավարտվել է եւ մրցաշարային աղյուսակում ընդգծվել են առաջատարներն ու ետևապահները: Ցավոք, վերջիններիս թվում է նաեւ Արմյանի «Կոտայք»ը: Դայտնի է, որ այս տարի առաջին խմբին հրաժեշտ են տալու միանգամայն 6 թիմ, իսկ այդպիսի պարագաներում առաջնության սկզբնամասում կորցրածը աշխարհում հավանաբար հնարավոր չի լինի ետ բերել: Դայտի առնելով, որ «Կոտայք»ը արտագնա խաղերում չի կարողանում միավորներ վաստակել, իսկ սեփական հարկի տակ էլ առատորեն շեռայում է (հերթական 10-րդ տուրում «Կոտայք»ը Արմյանում 0:2 հաշվով պիժեց Դոկի-Ռոստովի «Ռոստսելմաշին»), ուստի լավատես լինելը միանտոլթյուն է:

Ֆուտբոլի հանրապետական Ֆեդերացիան արդեն այժմվանից պետք է մտադիր լինի «Կոտայք»ի ճակատագրով, այսպես հետո ու չլինի: Իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է բարելավել փոխարարբերությունները «Կոտայք»ի եւ «Արարատ»ի միջեւ: «Կոտայք»ին օգնել է պետք:

ՆՍՅՄ առաջնություն
Առաջին խումբ

	Խ	Յ	Ո	Պ	Գ	Մ
1. Տիլիգուլ	9	5	4	0	13-6	14
2. Տեքստիլշչիկ	10	6	1	3	16-10	13
3. Ռոստո	9	5	3	1	16-9	13
4. Բուկովինա	10	5	3	2	11-5	13
5. Նովոկախո	9	5	3	1	8-2	13
6. Ռոստսելմաշ	9	4	3	2	11-5	11
7. Նևրալմաշ	10	5	0	5	13-8	10
8. Լոկոմոտիվ Լ.	9	4	2	3	8-8	10
9. Տավրիա	9	4	2	3	13-17	10
10. Ռիեմոն Սուխ.	10	2	6	2	4-3	10
11. Նեժնյանկի	9	4	1	4	9-9	9
12. Ռիեմոն Սու.	10	3	3	4	9-9	9
13. Կախոբ	9	3	3	3	6-6	9
14. Գեուլոգ	10	3	3	4	9-11	9
15. Ֆակել	10	3	3	4	5-9	9
16. Չեխով	10	2	5	3	7-7	9
17. Չինկիկ	9	3	2	4	9-14	8
18. Նեժնյի	10	3	2	5	6-9	8
19. Կոտայք	10	3	2	5	6-12	8
20. Չիմբուլ	10	1	6	3	8-10	8
21. Դարդաուգավ	10	1	2	7	4-14	4
22. Կոբաև	9	0	3	6	4-12	3

Ժ.ՄԱԾԱԶԵԱՆ-Ն.ԱՐՄԱՆԻ

Ճարտակվում է սփյուռքահայ բանաստեղծների փառատոնը Հայաստանում: Երեւան են ժամանել նաեւ Կալիֆոռնիայի 1987 եւ 1988 թվականների բանաստեղծների դպրոցակիրներ, Նանտի եւ Էդինբուրգի միջազգային մրցույթների մասնակիցներ Ժորայր Փափազյանը եւ Նորա Արմանին, որոնք մայրենի հանդիսատեսին են ներկայանում «Կայան Արարատյան» ներկայացմամբ: Մեր բոլորակիցները մի քանի հարցով դիմեցին նրանց:

ՀԱՐԹ - Ինչպե՞ս եղաւ մտայնացումը «Կայան Արարատյան»-ի:

ՊԱՍԱՍԻԱՆ - Միշտ այ մտքիս մէջ եղած է նման ներկայացման մը գաղափարը, կը մնար գայն իրականացնելը: Հայաստանի մէջ ուսանած ժամանակահատուածի ընթացքին սկսած եմ հաւարել հայկական քանաստեղծութիւններ: Անոնց մէջ տեսնելով քնական կապ մը, որոշեցի համարդելով նորառն ներկայացման մը իրականացումը:

ՀԱՐԹ - Ասկէ առաջ ու՞ր եւ երբ ներկայացուցած էք պիւք:

ՊԱՍ. - Մասնակցած եմ Կալիֆոռնիայի տարեկան մրցույթի եւ արժանացած 1987-ին չորս մրցանակի, իսկ 1988-ին երեքի: Նաեւ ներկայացուցած եմ Կանադա, Ավստրալիա, Ֆրանսա... եւ պիտի մասնակցիք նաեւ Ալիւնեմի փառատոնին: ՀԱՐԹ - Այս պիւքը ներկայացնելով օ-

տար երկիրներու մէջ, ինչ ընդունելութիւն գտած է:

ՊԱՍ. - Անշուշտ, որ բացի հայերէնէն ուղած են ըստմանի օտար հանդիսականներ, որոնք լաւագոյնս գնահատած են, հակառակ որ շատերը հայոց պատմութիւնը բոլորովին անտեղեկ էին:

Օտար մամուլը արձագանքած է դրական յղումներով, յօդուտ մեր ներկայացման եւ հայկական հարցին:

ՀԱՐԹ - Ի՞նչ նետագայ ծրագիրներ ունիք:

ՊԱՍ. - Զիջող ըսելով, յօգնած եմ հայկական թմաներէ, կ'ուզեմ փորձել այլ թմաներ, արդէն իսկ ինձի առաջարկած են դիրքի օտար սինեմաներու մէջ, բայց հայկական թման կը մնայ իմ ստեղծագործութիւններուս առանցքը:

Պատրաստեցին՝ ԿԱՐՕ ՄՐՓՍԵՆՆ, ՅԱՐԻԿ ԲՍԼԱԹԻՆԵՍՆ



Վ. ԲԱԿԱՏԻՆ. «Ես անկախ թեկնածու եմ»

Ո. ԱՐԴՈՒԼՍԻՊՈՎ. «Մենք ամենաիդեալական գույզն ենք»

Մոտ երկու ժամ տևեց մայիսի 22-ին Մոսկվայի Ժուռնալիստների կենտրոնական տանը ՌԽՖՍՀ պրեզիդենտության թեկնածու, ԽՍՀՄ ներքին գործերի նախկին նախարար Վ. Բակատինի և նրա ներկայացրած փոխպրեզիդենտի թեկնածու Ռ. Արդուլատիպովի մամուլ ասուլիսը:

Բակատինը ներկայացնելով իր նախընտրական ծրագրի 11 կետերը, նշեց, որ ամենախնդրեղ համաձայնության սկզբունքն է՝ ճիշտված իշխանության բազալտությունը և արդարության վրա, այնուհետև՝ գործարար ուժերի համագործակցության սկզբունքը: Պրեզիդենտը կախվածություն պետք է ունենա ոչ թե գաղափարախոսությունից, այլ օրենքից: «Նա չպետք է ունենա աստուծոց բացի այլ աստված, իսկ այդ աստվածը պետք է լինի օրենքը»: Այս հարցում Ռ. Արդուլատիպովն ունի իր յուրաքանչյուր մակարանությունը, այն է՝ «կենդ ճեռ միությունը, աստծո հետ միությունն է»:

Արդուլատիպովը երկրի տնտեսական իրավիճակին, Բակատինը նշեց, որ ինքն աջակցում է «9+1»-ի հայտարարությանը և գտնում է, որ այսօր բան երբևէ կենտրոնն ու հանրապետությունները պետք է համագործակցեն, հատկապես խորհրդային փլուզվող էկոնոմիկայի հարցերում: Ըստ Բակատինի, մոտ ապագայում պետք է ընդունվի մի հռչակագիր, որը կապահովի և կերպարավորի մարդու անվտանգությունը, անկախ նրա ազգությունից և երկրի տարածքից:

Արդուլատիպովը հայտարարեց, որ ազգային-ֆեդերատիվ հարաբերություններով պետք է ուժեղացնենք Ռուսաստանը, բայց չմոռանանք նաև ինքնավար միավորումներին: Այլապես, կծագեն նոր բարդություններ:

Այն հարցին, թե ինչպես է Բակատինը պատկերացնում հայ-ադրբեջանական կոնֆլիկտի ընթացքում զինված ուժերի օգտագործումը, նա պատասխանեց. «Եթե կան օրենքի խախտումներ, ապա ուժ պետք է գործադրվի, իսկ այն որ բռնության դեմ բռնություն է կիրառվում, դա բնական է»: Ինչ վերաբերում է Ռուսաստանի համագումարում այդ հարցի քննարկմանը, ապա ըստ Բակատինի, դա պետք է արվի զգուշությամբ: «Այդ կոնֆլիկտը բարդ է, և Ռուսաստանը ավելի շատ, քան որևէ այլ հանրապետություն պետք է պատասխան տա այն բոլոր ազգային միավորումների համար, որոնք առաջ էլ մտնում էին Ռուսական կայսրության մեջ: Չպետք է մոռանալ, որ Ռուսաստանի սահմաններից դուրս, միութենական հանրապետություններում ապրում են 26 մլն-ից ավելի մուսուներ»:

Մամուլ ասուլիսի վերջում Բակատինը հույս հայտնեց, որ իրեն կընտրի այն խավը, որն աշխատում է, սովորում, երեխաներ դաստիարակում, ում հուզում է ընտանիքն ու Ռուսաստանը, նրա ապագան:

ՀԱՅՈՐ ԱՍՏՄՏՅԱՆ
Սեր սեփ. թղթ. Մոսկվա, 22 մայիսի

Հայաստանի ներքին գործերի նախարարության աշխատակիցների մամուլ ասուլիսը

Մայիսի 22-ին Մոսկվայի Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցչության շենքում տեղի ունեցավ Հայաստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների մամուլ ասուլիսը, որին մասնակցում էին նախարարության հասարակական կարգի պահպանության բաժնի պետ, միլիցիայի գնդապետ Պայաթր Լալումյանը, Նոյնմերյանի շրջանի ներքին գործերի բաժնի պետ, միլիցիայի մայոր Տիգրան Մարգարյանը և Հայաստանի ԼՂՀ հատուկ նշանակության միլիցիայի շտաբի ղեկավար, միլիցիայի մայոր Արթուր Գեուրջյանը: Իրենց ներածական, հանգամանալից ելույթներում նրանք ներկայացրին ժամադրարկի հանրապետությունում 1990 թ. օգոստոսից մինչև վերջին շրջանում տեղի ունեցած ողորդական իրադրություններին: Նշված փաստերն ու կատարված դեպքերի մակարանություններն արդեն հայտնի են մեր ընթերցողներին:

Իրենց ներածական, հանգամանալից ելույթներում նրանք ներկայացրին ժամադրարկի հանրապետությունում 1990 թ. օգոստոսից մինչև վերջին շրջանում տեղի ունեցած ողորդական իրադրություններին:

Արթուր Գեուրջյանը փաստաթղթերով ու քերականությամբ փաստերով ներկայացրեց Հայաստանի հատուկ նշանակության միլիցիայի շտաբի գործունեությունը, քարտեզի վրա ցույց տվեց իրենց ուժերի տեղակայման կետերը:

Ասուլիսի վերջում, գնդապետ Պ. Լալումյանը մեր այն հարցին, թե ինչպիսին է այսօր իրավիճակը սահմանամերձ գոտում, պատասխանեց. «Համեմատաբար հանգիստ է: Նոյն, մասիս 21-ին առոճեցանական կողմից դարձյալ հրաձգություն է նշել: Տասուշի շրջանի Մոլունս, Պատարար գյուղի ուղղությամբ, Գորիսի շրջանի Խընձորակ, Տեղ գյուղերի, Որոտան գետգող ավտոխմուղու վրա ավտոմատներից արձակված կրակոցից մարդ է վիրավորվել: Այսօրվա ընթացքում հրաձգություն տեղի չի ունեցել, սակայն ուղղաթիռները շարունակել են իրենց թռիչքները: Նրանք փնտրում են հակակարկառային հրանոթներ, որպեսզի ոչնչացնեն: Ինչ վերաբերում է պատանդների ցուցակին և նրանց առևանգմանը, մենք սպասում ենք ԽՍՀՄ դատախազության տվյալներին: Թեև ներքին գործերի նախարարությունը տվել է այդ ցուցակը, բայց չի նշել հիշյալ առևանգումը հարուցվող մեղադրանքները: Այժմ ձեռնարկում ենք, հույսով ենք, որ մոտակա 1-2 օրը կստանանք»:

Սեր սեփ. թղթ. Մոսկվա, մայիսի 22

Մարտի արբեջանցի գրոհայինների և ԽՍՀՄ ԼՂՀ զինծառայողների միջև

Լեռնային Ղարաբաղում իրադրությունն առաջվա պես բարդ է: Ծարուհավում են արբեջանական և ԽՍՀՄ ԼՂՀ զինծառայողների միջև մարտերը: Այսպես, ուրբաթ օրը, մայիսի 24-ին, Լեռնային Ղարաբաղի Հայաստանի շրջանի Արփագյարուկ գյուղի շրջակայքում մարտ տեղի ունեցավ, որը տևեց երկուսուկես ժամ: Ձեռնվեց ներքին գործերի պրապորշչիկ Իվան Ստարոժիկին, 1947 թ. ծնված, երկու երեխաների հայր: Տիվորականների տվյալներով, ըստ պալեի է նաև, առկա են, արբեջանցի երկու գրոհային:

Ծարուհավում է Հայաստանի շրջանի գյուղերի օրեր առաջ բռնագաղթված հայ բնակիչների վերադարձը, իրեն կանոն, թալանված տներ:

ՈԱԿ-ի լուսավորությունը Երեւանում

Ոամկավար պատանական կուսակցության պատվիրակությունը, զլխավորությամբ կենտրոնական վարչության նախագահ ղուլու, Արշավիր Գյոնջյանի և անդամներ Հայկազեն Ուլուսյանի, Վարդան Ուլուսյանի և Ռուբեն Թերվյանի, ռամկավար և համակիր գործարար շրջանակների ներկայացուցիչների ուղեկցությամբ հինգշաբթի լույս ուրբաթ գիշեր Փարիզի Ժամանակների Երեւան, կարճատե այցելությամբ:

Հայ գործարար մարդկանց համաժողովի շրջանակներում ժողովներ ու տեսակցություններ ունենալուսն Կուրահեռ, ՈԱԿ-ի պատվիրակությունը հանդիպումներ կունենա նաև հանրապետության պետական, քաղաքական ու տնտեսական շրջանակների պատասխանատուների, ինչպես նաև գիտական մտավորականության և ժողովրդային խավերի ներկայացուցիչների հետ:

Եռեն հետմիջոցին ՈԱԿ-ի պատվիրակությունը ներկա գտնվեց ընկ. Ռուբեն Թերվյանի Հայաստանում էլեկտրոնային խաղաղության երկրորդ համաժողովի ժեներալության էլեկտրոն գործարարի քաղաքի վրա տեղեկված «Հայիլ»-ի պայմանագրի ստորագրման արարողությանը, որը վերածվեց ժողովրդական տոնախմբության, իրեն: ՈԱԿ-ի կողմից Հայաստանում կատարվող տնտեսական վերակառուցման համալիրի մի նոր արտահայտություն:

Վրաստանում որեզիդենսական նախընտրական լուսավոր թեժանում է

interfax

Վրաստանի պրեզիդենտության ընդդիմադիր թեկնածուներից մեկը՝ Վալերիան Աղվաճեն խիստ քննադատության ենթարկեց հանրապետության ներկայիս ղեկավարությանը Չվիաղ Գամսախուրդիայի զլխավորությամբ: Մայիսի 23-ին, Թբիլիսիում կայացած մամուլ ասուլիսում ելույթ ունենալով նա նշեց, որ այն օրվաին, երբ «Վերսեբան-Ավատ Վրաստանի» քաղաքական դաշինքը եկավ իշխանության գլուխ, քնակչության կենսամակարդակը կտրուկ ընկավ, չեն ընդունվել հողի, սեփականաշնորհման, քաղաքացիության մասին օրենքները, «իրական նվաճումների տեսակետից գործնականում ոչինչ չի արվել»: Վ. Աղվաճեն խոսքերով, իրագործվում է մամուլի, հեռուստատեսության մենաշնորհացումը, ցանկացած այլախոհություն մատուցվում է որպես ազգային ապատարանական շարժման դավաճանություն, իսկ ընդդիմադիր ուժի ղեկավարները քիչ է մտում հայտարարվեն ժողովրդի թշնամիներ:

Շոշափելով Վրաստանի և ԽՍՀՄ-ի միջև հարաբերությունների հարցը, Վ. Աղվաճեն ասաց, որ ինքը դեմ է ստորագրելու Միութենական պայմանագիրը: Սակայն հանրապետության լրիվ անկախությունը երկարատե գործընթաց է, որի ժամանակ չի կարելի քանդել տասնամյակների ընթացքում ստեղծված տնտեսական, քաղաքական և մշակութային կառուցվածքները:

Վ. Աղվաճեն կարծիք հայտնեց, թե մայիսի 26-ին Վրաստանում պրեզիդենտական ընտրությունների ժամանակ կհաղթի Չ. Գամսախուրդիան: «Շատ-շատերը մղեցանդորեն հավատում են նրան, և դրա պատճառով չեն նկատում նրա կողմից անկախությունը քաղաքականության վրիպումները և կոպիտ սխալները»,- նշեց նա:

Պատասխանելով այն հարցին, թե «Ի՞նչ է սպասվում Վրաստանի պրեզիդենտի ընտրություններից հետո, Վ. Աղվաճեն ասաց. «Պիկտատուրայից հետո գալիս է բնաստիություն»:

Մայիսի 22-ին Վրաստանում տեղի ունեցավ ընդդիմադիր Ազգային կոնգրեսի կողմնակիցների ցույց, որին մասնակցեց մոտ 10 հազար մարդ: Ցույցարարները տանում էին Չ. Գամսախուրդիայի դեմ ուղղված պատասխաններ և կարգախոսներ:

Մայիսի 23-ին Վրաստանի խորհրդարանն ընդունեց պրեզիդենտի անձը վիրավորելու պատասխանատվության մասին օրենքը:

Վլխավոր դասախազ Տրուբինը Թբիլիսիի աղիւյան դեղիերի մեջ մեղադրում է վրացիներին

ԽՍՀՄ զլխավոր դատախազ Նիկոլայ Տրուբինը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ է ուղարկել լըրացույիչ տեղեկագիր 1989 թվականի ապրիլի 9-ին Թբիլիսիում տեղի ունեցած դեպքերի հետաքննության մասին: Գլխավոր դատախազի կարծիքով անկարգությունների համար պատասխանատվություն են կրում ոչ Ֆորմալ կազմակերպությունների «Շեխինկյան խումբը», «Ազգային անկախության կուսակցությունը», «Ազգային դեմոկրատական կուսակցությունը», «Վրաստանի ազգային քրիստոնեական կուսակցությունը», «Վրաստանի ազգային արդարության կուսակցությունը»: Ընդհանուր առմամբ, այդ ժամանակ նրանց շարքերում կար մոտ 3 հազար մարդ:

Մինչև 1989 թվականի ապրիլի միջև այդ կազմակերպությունների ղեկավարներ Գամսախուրդիան, Կոստավան, Չանտուրիան և ուրիշները կազմակերպել են անց են կացրել մոտ 30 շարտեղված հանրահավաքներ, ցույցեր և քաղաքական գործադուլներ: Դրա հետեւանքով Թբիլիսիում և հանրապետության մյուս քաղաքներում սիստեմատիկաբար կոպտորեն խախտվում էր հասարակական կարգուկանոնը, բռնի կերպով դադարեցվում արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, չէր աշխատում հասարակական տրանսպորտը:

Նրանք նապատիժ մտալով, ապրիլի սկզբին կտրուկ ակտիվացրին իրենց հակասահմանադրական գործունեությունը, ապակայունացնելով հանրապետության հասարակական, քաղաքական կյանքը, առում է Տրուբինը: Այսպիսով, «Թբիլիսիի դեպքերի բոլոր հետեւանքները, նաև ամեղ Կոնեղի արյունը, ապօրինի քաղաքական արհայի կազմակերպիչների խղճի վրա են, որոնց գործողություններն անհրաժեշտ էր որակել որպես «վանգվածային անկարգությունների կազմակերպում և ազամիջյան թշնամանքի հրահրում»:

Մինչև 1989 թվականի ապրիլի միջև այդ կազմակերպությունների ղեկավարներ Գամսախուրդիան, Կոստավան, Չանտուրիան և ուրիշները կազմակերպել են անց են կացրել մոտ 30 շարտեղված հանրահավաքներ, ցույցեր և քաղաքական գործադուլներ: Դրա հետեւանքով Թբիլիսիում և հանրապետության մյուս քաղաքներում սիստեմատիկաբար կոպտորեն խախտվում էր հասարակական կարգուկանոնը, բռնի կերպով դադարեցվում արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, չէր աշխատում հասարակական տրանսպորտը:

Ձուրակչ Վրասանի ազգային գվարդիա

Վրաստանում շարունակվում է պարտադիր ժամկետավոր ծառայության վորակչը ազգային գվարդիա: Այն ստեղծվել է Գերագույն խորհրդի կարգադրությամբ, հունվարի 29-ին՝ հանրապետությունը պաշտպանելու նպատակով: Գործնականում բոլոր շրջաններում ստեղծվել են վորակչի հանձնաժողովներ, որոնք աշխատում են լրիվ բեռնավորությամբ: Ազգային գվարդիայի համալրումը կատարվում է ԽՍՀՄ պինյալ ուժերի շարքերից դուրս եկած վրաց Կինծառայողների հաշվին: Նրանք արդեն կազմում են ավելի քան 1000 հոգի:

Նրանք նապատիժ մտալով, ապրիլի սկզբին կտրուկ ակտիվացրին իրենց հակասահմանադրական գործունեությունը, ապակայունացնելով հանրապետության հասարակական, քաղաքական կյանքը, առում է Տրուբինը: Այսպիսով, «Թբիլիսիի դեպքերի բոլոր հետեւանքները, նաև ամեղ Կոնեղի արյունը, ապօրինի քաղաքական արհայի կազմակերպիչների խղճի վրա են, որոնց գործողություններն անհրաժեշտ էր որակել որպես «վանգվածային անկարգությունների կազմակերպում և ազամիջյան թշնամանքի հրահրում»:

«Աղբեջան-Իսրայել» միության նոր ղեկավարը

«Աղբեջան-Իսրայել» միության նոր ղեկավար Աարոն Նեսիսը մտադիր է ակտիվացնել տնտեսական, մշակութային, հումանիտար կապերը Իսրայելի հետ: Ա. Նեսիսը քաղաքային դատարանի անդամ է, նախագահ է ընտրվել Բաքվում կայացած միության վարչության նիստում: Նախորդ ղեկավարը Կոնիկ էր ավտովթարից: «Մշակույթի և հումանիտար կապերի շրջանակում նախատեսված է առաջին հերթին ստեղծել Իսրայելում Աղբեջանական մշակութային կենտրոնը և Աղբեջանի և Իսրայելի միջև կապերի զարգացումը»:

Մինչև 1989 թվականի ապրիլի միջև այդ կազմակերպությունների ղեկավարներ Գամսախուրդիան, Կոստավան, Չանտուրիան և ուրիշները կազմակերպել են անց են կացրել մոտ 30 շարտեղված հանրահավաքներ, ցույցեր և քաղաքական գործադուլներ: Դրա հետեւանքով Թբիլիսիում և հանրապետության մյուս քաղաքներում սիստեմատիկաբար կոպտորեն խախտվում էր հասարակական կարգուկանոնը, բռնի կերպով դադարեցվում արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, չէր աշխատում հասարակական տրանսպորտը:

Լիսվայի լեհերը լուսահանում են ինքնավարություն

Սեր Թերթի նախորդ համարում տեղեկություն կար այն մասին, որ մայիսի 22-ին Վիլնյուսից ոչ հեռու գտնվող Շալիկիկայի շրջանում, լեհերը պետք է ինքնավարություն հայտարարեին: Սեր սեփական թղթակցի՝ ԳՍՄՆԵ ԱՅԻԿՍՄԼԻ ստացած տվյալների համաձայն, մայիսի 22-ին այնտեղ տեղի ունեցավ ժողովրդական դեպուտատների երրորդ համագումարը, որին մասնակցեցին մոտ 200 մարդ: Ներկա էին նաև Վ. Լանդսբերգիսը, որը հանդես եկավ ելույթով և Արեւելյա Լիտվայի խնդիրների ուսումնասիրությամբ կրթվող հանձնաժողովի նախագահը: Համագումարում ընդունվեց լեհերի ազգային, տարածքային երկրամասի կարգավիճակի նախագիծ, որում կա այսպիսի մի կետ: «Եթե Լիտվայի Գերագույն խորհուրդը հրաժարվի Վիլնյուսի լեհական երկրամասի կարգավիճակի նկատմամբ, համագումարը կդիմի Խորհրդային Միությանը»:

Մայիսի 23-ի տվյալներով, Լիտվայի Գերագույն խորհուրդում այդ հարցի ընկարկում առայժմ չի եղել:

Հայ լուսահանների ցուցակը Գորբաչովի մոտ է

Երեքշաբթի օրը, Մոսկվայի պետական կոնսերվատորիայում Մախարովյան առաջին կոնգրեսի ժամանակ, Մոսկվայում Հայաստանի կառավարության աշխատակիցները Միխայիլ Գորբաչովին իր օգնականների միջոցով փոխանակեցին պատանդների ցուցակ նրանց ազատագրման պահանջով: □

Երեքշաբթի օրը, Մոսկվայի պետական կոնսերվատորիայում Մախարովյան առաջին կոնգրեսի ժամանակ, Մոսկվայում Հայաստանի կառավարության աշխատակիցները Միխայիլ Գորբաչովին իր օգնականների միջոցով փոխանակեցին պատանդների ցուցակ նրանց ազատագրման պահանջով: □

Լուրերը՝ 1991-ի և մեր սեփ. թղթակցիներ